ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ

(Ալմաստ Զաքարյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Լրացավ գրականագետ, գրաքննադատ, բնագրագետ, գրականության պատմաբան, բանասիրական գիտությունների դոկտոր Ալմաստ Գրիգորի Զաքարյանի ծննդյան 90-ամյակը: Նրա գիտական կենսագրությունը համընկնում է Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմավորման հետ, որին անմնացորդ նվիրված է առ այսօր:

Ալ. Զաքարյանը ծնվել է 1923 թ. հունվարի 22-ին Նախիջևանի ԻԽՍՀ Օրդուբադի շրջանի (ասել է՝ վաղնջական Գողթն-Գողթան գավառի) Փառակա գյուղում, հողագործ գյուղացու ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի յոթնամյա դպրոցում, ապա 1937-ից այն շարունակել Երևանի մանկավարժական ուսումնարանում: Այսպես կոչված՝ սպիտակ ֆինների դեմ մղված պատերազմի օրերին՝ 1939-ին, մոբիլիզացվել և որպես ուսուցիչ աշխատել է Բասարգեչարի (Վարդենիսի) շրջանի Կարմիր Վանք գյուղում: 1940 թ. ընդունվել և 1944-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը:

1945 թ. հունվարի 8-ին, իր դասախոսների երաշխավորությամբ, որպես լաբորանտ աշխատանքի է անցել ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որտեղ և աշխատում է որպես առաջատար գիտաշխատող:

1951 թ. «Սուրեն Սպանդարյանը և գրականության հարցերը» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրության թեկնածուի աստիճան: 1976-ին «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և արժանացել բանասիրության դոկտորի աստիճանի:

Լայն ու տարողունակ է Ալ. Զաքարյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ խորհրդահայ գրականության պատմության ու գրական քննադատության ակունքներից մինչև ժամանակակից գրականության տեսության հարցերը, XX դարասկզբի հայ գեղարվեստական գրականության զարգացման ընթացքից մինչև Դեմիրճյանի, Բակունցի, Չարենցի, նորագույն շրջանի հայ բանաստեղծների ու արձակագիրների ժառանգության քննությունը: Այս հարցերին նա նվիրել է հարյուրավոր հոդվածներ, հրապարակումներ, գրախոսություններ, գրքեր: Այսպես, «Սովետահայ

գրականության պրոբլեմները. գրական-բանասիրական հետազոտություններ» երկրորդ գրքի երկրորդ բաժինը՝ «Սովետահայ գրականության ժամանակագրություն (1920–1947)» վերտառությամբ ստվար մասը պատկանում է նրա գրչին (կազմողներ՝ Ալ. Զաքարյան, Հ. Ղազարյան, ընդհանուր ղեկավարությամբ Էդ. Թոփչյանի, Երևան, 1948, էջ 249–637): Սրան հաջորդեց «Սուրեն Սպանդարյանը և գրականության հարցերը» (Երևան, 1956, 212 էջ), ապա «Սովետահայ գրականության տարեգրություն (1917–1956)» (հեղինակակիցներ՝ Հ. Ղազարյան, Ս. Մանուկյան, Երևան, 1957, 754 էջ), «Սովետահայ գրականության անցած ուղին» (Երևան, 1957, 41 էջ) գրքերը:

Անգնահատելի է Ալ. Զաքարյանի վաստակը հատկապես չարենցագիտության ասպարեզում. նա է իրականացրել մեծ բանաստեղծի գրական ժառանգության ամբողջական և գիտական առաջին հրատարակությունը՝ հարուստ ծանոթագրություններով ու տեքստային տարբերություններով: Եղիշե Չարենցի երկերի վեցհատորյա ակադեմիական այս հրատարակությունը (Երևան, 1962–1968), իրավամբ, կոլեկտիվ մի խմբի գործ էր, բայց նա դա կատարեց միայնակ՝ դրանով իսկ դնելով չարենցագիտության հիմնաքարերը, որոնք էլ ուղենիշ դարձան չարենցագետների համար: Նկատենք, որ Ալ. Զաքարյանը խմբագրական, ասել է թե՝ անտիպ սնագրությունների վրա երկարատև աշխատել ու տեսքի է բերել նաև «Անտիպ և չհավաքված երկեր»-ում (բնագիրը պատրաստել և ծանոթագրել է Ա. Չարենցը, Երևան, 1983, 711 էջ) զետեղված Ե. Չարենցի չափածո էջերը (չնչին բացառությամբ): Այդ մասին ահա թե ինչ է գրված ժողովածուի «Խմբագրության կողմից» առաջաբանում. «Ա. Գ. Զաքարյանը խմբագրել է մասնավորապես Չարենցի չափածո անտիպ ժառանգությունը՝ աշխատելով Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող բանաստեղծի ձեռագրերի վրա» (էջ 8):

1970-ական թվականներին Ալ. Զաքարյանը հրատարակեց «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը (ակունքները և զարգացման ուղիները)» (գ. 1, Երևան, 1973, 330 էջ) և «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը (ակունքները և զարգացման ուղիները). Քնարերգություն» (գ. 2, Երևան, 1977, 440 էջ) երկհատորյակը: Աշխատության մեջ քննվում են XX դարասկզբի հայ բանաստեղծության զարգացման ընթացքը, գեղարվեստական առանձնահատկությունները, ցույց է տրվում, թե դարամուտի պոեզիան, մասնավորապես Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի ստեղծագործությունները ինչ առնչություններ ունեն մեր տոհմիկ ավանդների և համաշխարհային գեղարվեստական մտայնությունների հետ, միաժամանակ բնութագրվում են նրանց որակական նոր կուտակումները, պոեզիայի առանձնահատկությունների քննության ընթացքում վերլուծության նյութ են ծառայում բանաստեղծական առավել բնորոշ երևույթներ: Այս կապիտալ ուսումնասիրության մեջ Ալ. Զաքարյանը հանդես է բերել գիտական վերլուծությունների ներհուն ուժ, գեղարվեստի նուրբ զգացողություն, միայն իրեն հատուկ գրելաոճ: Արժեքավորելով աշխատության 1-ին գիրքը՝ անվանի բանագետ-հայագետ Ս. Հարությունյանը մասնավորապես գրել է. «... քննարկվող մենագրության

մեծագույն գիտական նվաճումն այն է, որ պատմա-տիպաբանական և համեմատական մեթոդների զուգակցված քննություններով բացահայտվում են հայ նոր բանաստեղծության ժառանգական բնիկ ավանդույթները, դրանց բուն ազգային-ժողովրդական ակունքներն ու կենսական երակները: ... հայ բանաստեղծության ավանդների ծագման ու ժառանգական փոխակերպումների առաջին լուրջ և հաջողված փորձը լինելով, միաժամանակ և նոր խոսք է ու գիտական կարևոր, շատ կողմերից ուսանելի ներդրում արդի հայ գրականագիտության մեջ» («Սովետական գրականություն», 1974, -3, էջ 117–118):

Ալ. Զաքարյանի գրիչը բեղմնավոր է, մշտապես ներկայանում է յուրահատուկ ասելիքով՝ խոհերով, հարցադրումներով և դրանց անսպասելի լուծումներ տալով: Դրա խոսուն վկայություններից են «Ավանդների ուժը» (Երևան, 1981, 268 էջ), «Գրական արձագանքներ և հուշեր» (Երևան, 1985, 320 էջ), «Գրականության և պատմության ընթացքները» (Երևան, 1989, 548 էջ) ժողովածուներում ընդգրկված նյութերը: Դրանցում մասնավորապես Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ակ. Բակունցի, Պ. Սևակի ստեղծագործության նյութերով, նրանց կյանքի ու գործունեության հանգամանքներով շոշափվում են խորհրդահայ գրականության պատմության և տեսության հարցեր, շեշտվում է խորհրդահայ դասական ավանդների դերը գրականության զարգացման տեսանկյունից, արծարծվում են արդի գրականագիտության ու քննադատության խնդիրներ, զետեղված են նաև հեղինակի հուշերը գրականության ու արվեստի անվանի գործիչների (Մ. Սարյան և Սարյաններ, Ավ. Իսահակյան, Պ. Սևակ) մասին:

Եվս մեկ արժեքավոր հրատարակություն է «Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820–1920 թթ.)» (տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գարրի Հովհաննիսյանի հեղինակակցությամբ) մեծածավալ ժողովածուն (Երևան, 1982, 596 էջ): Դրանում ամփոփված է Մ. Թաղիադյանից՝ ներառյալ Ե. Չարենց հայ գրողների, հրապարակախոսների, հասարակական-քաղաքական գործիչների ժառանգությունից քաղված ազատասիրական գաղափարներով տոգորված էջեր:

Պատկերավոր ասած՝ Ալ. Զաքարյանի «կյանքի գիրքը», այնուամենայնիվ, նրա հեղինակած Չարենցի գիտական կենսագրությունն է՝ «Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը» վերնագրով: Ընթերցողի սեղանին են դրված մենագրության երեք հատորները (Երևան, 1997, 968 էջ, Երևան, 2003, 430 էջ, Երևան, 2008, 532 էջ): Դրանցում բազմաթիվ ու բազմապիսի փաստական-հուշագրական վկայակոչումներով և բանաստեղծական վիթխարի վաստակի վերլուծությամբ քննականորեն ներկայացվում է Չարենցի կյանքը, գործն ու ժամանակը՝ ներառյալ 1927 թվականը: Մեր իրականության մեջ հանրագիտարանային ու համապարփակ այս աշխատանքը, իրոք, իր նախօրինակը չունեցող, խոշոր երևույթ է: Ինչպես իրավամբ նկատել է ակադեմիկոս Ս. Սարինյանը՝ «Հիրավի համապարփակ, քանզի այստեղ շարժման մեջ է հայոց ժամանակը՝ ազգային, հասարակական, գաղափարական բարդ տեղաշարժերով: Դեպքերն ու դեմքերը ուղղակի թե անուղղակի կապերով առնչվում են ազգային հանճարի կենսագրությանը՝ իմաստավորվում, գնահատվում, վերլուծվում նրա հայացքով: Եվ պետք է

դիտել միայն, թե ինչպիսի հմտությամբ է գրականագետը ներհյուսում ժամանակագրության էջերը, բացահայտում, մեկնաբանում իրերի բնույթը, ու համոզվում ես, որ նա, միայն նա կարող էր կատարել այդ գործը, քանզի արտոնված էր անանձնական նվիրումով, նաև հարուստ կենսափորձով, մտավոր զարգացմամբ և անհատապես գիտակցված աշխարհայացքով» («Գրական թերթ», 13. 02. 2004): Նկատենք, որ Ալ. Զաքարյանն աշխատում է այս կոթողային մենագրության հաջորդ հատորների վրա, որոնց հրատարակմամբ էլ կամբողջանա մեծն Չարենցի գիտական կենսագրությունը:

Ալ. Զաքարյանը հայ գրականությանն ու մշակույթին անմնացորդ նվիրված մտավորական է: Հանրագիտարանային գիտելիքներով, հետազոտական եռանդուն էությամբ, իր սկզբունքների մեջ անզիջում ու հետևողական, անաչառ գրականագետը միշտ էլ առանձնացել է մեր գիտական և գրական միջավայրում (ի դեպ, նա Գրողների միության անդամ է 1973 թ.): Գրականագետ Ա. Դոլուխանյանի դիպուկ բնորոշմամբ՝ «թեթևաքայլ կեցվածք ու մտքի պայծառություն» («Գրական թերթ», 13. 02. 2004) ունեցող Ալ. Զաքարյանն իրավունք ունի հպարտանալու իր ապրած օրերով, ստեղծած բարձրարժեք ուսումնասիրություններով և ծանրակշիռ վաստակով:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ